*հովիւների յարաբերութեան խնդիրը Մայր Աթոռի հետ և տեղեկագրել իրան։*

*Հետևանքի մասին մենք կհաղորդենք իւր ժամանակին մեր ընթերցողներին։*

---

## ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

1896 *Թուականի սարսափների պատճառով Տաճկահայաստանից Ռուսիա ապաւինած գաղթականները տարւոյս օգոստոսամսին խմբերով սկսան վերադառնալ հայրենիք Կարսի վրայով։ Նոցա վերադարձը դիւրացնելու համար՝ Ազգիս վեհափառ Հայրապետը Կարուց յաջորդին առանձին կոնդակով պատուիրեց անձամբ գնալ գաղթականների մօտ և յայտնել, որ նոքա կամ աշխատեն ընդունել ռուսահպատակութիւն, կամ վերադառնան Տաճկաստան այլ կողմերից և կամ անցնել Պարսկաստան, որտեղից կարող են վերադառնալ հայրենիք Մակուի խանութեան վրայով։*

---

## ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԷՔԸ

*Յայտնի հարուստ և բարեգործ Պ. Աղէքսանդր Մանթաշեանը, Վանքի աւագ եկեղեցին ի ներքուստ հոյակապ կերպով նորոգել տալուց յետոյ, այժմ մի փառաւոր եկեղեցի է կառուցանում Պարիզում տեղական հայ գաղութի համար, որոնց թիւր 250 ընտանիքի է հասնում, բացի բազմաթիւ ուսանողներից։ Տեղը ընտրուած է ամենագլխաւոր փողոցում, Շանզէլիզէի վերայ և այս օրերս կատարուել է հիմնարկէքի հանդէսը Եւրոպայի հայոց Առաջնորդ Տ. Գէորգ եպիսկոպոս Իւթիւճեանի ձեռքով։ Սակայն ցաւօք սրտի պիտի ասենք, որ Հայաստանեայց եկեղեցու այդ նուիրական և շքեղ հանդէսը, ինչպէս հաղորդում է «Բիւզանդիոն» լրագրին նորա Պարիզի թղթակիցը, կատարուել է շատ անշուք կերպով և Մայր Մաշտոցի սահմանած կարգերը չեն պահպանուել ըստ պատշաճին։—«Եւրոպայի առաջնորդ սրբազանն, գրում է այդ թղթակիցը, օգտուելով բարիզաբնակ ժողովրդեան միամտութենէն և կամ անտարբերութենէն, բայց չյուսալով որ կգտնուին մէկ և կամ երկու հասկցող անձինք,—արարողութիւնը փոխանակ ըստ Մաշտոցի կատարելու, համարձակութիւն ունեցաւ առանց զգեստաւորուելու վեղարով, առանց խաչ և գաւազանի, հիմնարկէքի 16 քարերը մի առ մի օծելէ և միւռոնաշաղախ մատներով անմիջապէս խնկարկելէ ետև, գոցել տալու»...։ Եթէ ստոյգ են լրագիրների հաղորդածները, կարելի է հիա-*